ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«18» 11 2025 թ.
№ ԿԱԼՆԱ/2043

Խաչատուր Հակոբյան Ա.Ձ-ին /ՀՎՀՀ 25307269/
ՀՀ, ք. Երևան, Ավան 14 փ., 19/1
էլ. փոստի հասցե՝ thtllc@tender@gmail.com
Հեռ.՝ +374 99 53 33 11

ՀՀ պաշտպանության նախարարության և Խաչատուր Հակոբյան Ա/Ձ-ի միջև 14.05.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-7/3-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Խաչատուր Հակոբյան Ա/Ձ-ն պետք է մատակարարեր՝ 3 000 հատ կրծքանշան արյան կարգի /գրասենյակային/ ՌՈ, որից 42 հատը չի մատակարարել, 3 000 հատ կրծքանշան Հայկական բանակ /գրասենյակային/ ՌՈ, որից 990 հատը չի մատակարարել, 450 զույգ ուսադիր լեյտենանտի ՌՈ, որից 210 զույգը չի մատակարարել, 2600 հատ թևքանշան ՌՈ /10*10 դաշտային/, որից 1240 հատը չի մատակարարել, 2600 հատ թևքանշան ՀԱՅԱՍՏԱՆ ՌՈ /10*10 դաշտային/, որից 1240 հատը չի մատակարարել, ինչպես նաև ամբողջությամբ չեն մատակարարվել՝ 3 000 հատ թևքանշան գրասենյակային /աջ թևային/ ՌՈ և 240 զույգ ուսադիր ավագ ենթասպայի ՌՈ:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը 14.11.2025թ.-ին միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ Խաչատուր Հակոբյան Ա/Ձ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 188 559 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) և 12 405 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 06.10.2025թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 655 150 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 982 725 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2025թ. նոյեմբերի 24-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 655 150 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 982 725 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա Խաչատուր Հակոբյան Ա/Ձ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. նոյեմբերի 24-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ